

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՆԵՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խոսքային գործընթացում լեզվական միավորները գտնվում են որոշակի փոխկապակցության մեջ, որն իրացվում է տվյալ լեզվին բնորոշ քերականական միջոցներով: Նախադասության անդամները հայերենում իրար նկատմամբ կարող են գտնվել հավասարական, համադասական և ստորադասական հարաբերությունների մեջ: Այդ կապակցությունների առանձին դասերումների բնորոշ է միավորների քերականական համաձայնությունը: Քերականագիտության մեջ ընդունված է, սակայն, համաձայնությունը համարել սոսկ ստորադասական կապակցության ձև: Այսպես, Մ. Արեղյանը¹, Շալոց լեզվի տեսություն աշխատության մեջ ընդունելով կապակցության միայն երկու ձև՝ համադասություն և ստորադասություն, գրում է. «Բառերի ստորադասությունը իր տրամաբանական ձևով երկու տեսակ է՝ կախում և ներունակություն»²: Ընդունելով նախադասության միաբան կառուցվածք՝ Արեղյանը միատեսակ ներունակական կապ է տեսնում ինչպես բացահայտյի ու բացահայտյալի, այնպես էլ ենթակայի և ստորոգյալի միջև: Համաձայնության արեղյանական ըմբռնումը մասնակի փոփոխություններով ընդունվում է նաև ժամանակակից քերականների մեծ մասի աշխատություններում, դրա համար էլ կապակցության այդ տեսակն ուսումնասիրվում է ստորադասական հարաբերությամբ կապված լեզվական միավորների միջև: Այդպիսով ջրջանցվում է բացահայտ անհամապատասխանությունը գլխավոր անդամների հարաբերության և կապակցության այդ եղանակի գնահատության հարցում: Այսպես, քերականների ճշգրտ մեծամասնությունը ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապը համարում է ոչ լրացական, հավասարական, միաժամանակ համաձայնությունն արժեքավորում իբրև ստորադասական կապակցության ձև: Քննվող հարցի առումով ուշագրավ է ստորոգելիական վերադրի ու հանգուցի համաձայնությունը (հմմտ. ես եմ, դու ես, նա է, մենք ենք, դուք եք, նրանք են): Ելնելով համաձայնության վերը նշված գնահատությունից՝ կարելի է մտածել, որ ստորադասական կապ պետք է որոնել նաև այդ հարաբերության մեջ, մի բան, որ ոչնչով չի արդարացվում: Ստացված անհամապատասխանությունը թևադրում է, որ քերականական այդ երևույթներից որևէ մեկի գնահատությունը ճիշտ չէ:

Նշված հարցի կարևորությունը չի վրիպել ռուս քերականների ուշադրությունից, և նրանք հարցը յուրովի են լուծել՝ ելակետ ունենալով ռուսերենի կապակցության ձևերի յուրահատկությունները: Ռուս լեզվաբանները, անդրադառնալով այդ և նման հարցերի, ընդունում են ստորադասական կապերի կիրառության երկու ոլորտ՝ բառին առընթեր (присловный) և բառին ոչ առընթեր (неприсловный): Առաջին խմբի մեջ մտնում են բառակապակցության մեջ գործող ստորադասական կապերը՝ համաձայնությունը, խնդրառությունը և առդրությունը, երկրորդում՝ նախադասության մեջ գործող հարաբերությունները: Անդրադառնալով միայն մեզ հետաքրքրող հարցին՝ նկատենք, որ ռուսերենում համաձայնությունն են համարվում միայն գոյականական բառակապակցություններում գործող կապերը, որով և արդարացվում է համաձայնությունը ստորադասական կապակցության ձև ընդունելը: գոյական գերադաս անդամի հետ համաձայնում են ածականները (հոլովով, թվով, սեռով), ածականական դերանունները, դասական թվականները, դերբայները (թվով և հոլովով): Նշված տեղում ենթակայի և ստորոգյալի միջև եղած քերականա-

1 Մեր նպատակադրումից դուրս է համաձայնության հարցի պատմության մանրամասների նկարագրությունը, նշենք միայն, որ համաձայնությունը, իբրև խոսքի կառուցման կարևոր միջոց, ավել կամ պակաս չափով հետաքրքրել է սկզբնապես լատինաբան, հետագայում քերականությամբ ինքնուրույն զբաղվող բազմաթիվ լեզվաբանների (Ս. Զուլայեցի, Կ. Գալանոս, Հովհաննես Հոլով, Շրոդեր, Բազդասար Դպիր, Մ. Սերաստացի, Զամյան, Գ. Ավետիքյան, Այտրյան, Ստ. Պալասանյան, Մ. Արեղյան և ուրիշներ):

2 Մ. Առեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 397:

կան հատկանիշների համապատասխանությունը որոշիչ-որոշյալի ստորադասական կապակցությունից տարբերելու համար անվանվել է **КООРДИНАЦИЯ**՝ Մեր կարծիքով նպատակահամար չէ՝ քերականական նույն երեւոյթը տարբեր ոլորտներում տարբեր կերպ անվանել, և տերմինի փոփոխությունն ըստ էության լի լուծում այդ հարցում ծառացած դժվարությունը։ Սակայն այստեղ հատկանշականն այն է, որ ուսու լեզվաբանները, այնուամենայնիվ, չեն հավասարեցնում ստորադասական և ոչ ստորադասական՝ հավասարական հարաբերություններում հանդես եկող համաձայնությունը։

Հայերենի խոսքի կառուցման օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն ռուսերենի, համաձայնությունը բառին առնթր կապերում՝ բառակապակցություններում դրեթն չի գործում, այն առավելապես առկա է նախադասության մեջ արտահայտվող քերականական կապերում⁴, այն է՝ ենթակայի և ստորոգյալի, դեմքի և թվի քերականական կարգ տարբերակող ստորոգելիական վերադրի և հանգույցի (երբեմն ենթակայի և վերադրի, ենթակայի և հանգույցի), բացահայտյալ ու բացահայտյալի միջև, քերականական միավորներ, որոնց մի մասն ընդգրկվում է ստորադասական կապերում, իսկ մյուս մասը դուրս է գալիս նրա սահմաններից։

Համաձայնության երեւոյթի ոչ ճիշտ գնահատության արդյունք է նաև այն, որ հայագիտության մեջ հաճախ իբրև համաձայնություն են ներկայացվում որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի փոխադամանավորվածության որոշ երեւոյթներ։ Այդ առումով ուշադրության է արժանի ակադ. Գ. Ջահուկյանի՝ համաձայնության երեւոյթը քերականորեն հիմնովին բնութագրող հետևյալ միտքը. «Կառավարության դեպքում կառավարվողը և համաձայնության դեպքում՝ հարաբերվող կողմերից յուրաքանչյուրը ունի հնչույթային համապատասխան արտահայտություն»⁵։ Նա համաձայնության տիպի կախումը իրավացիորեն բանաձևում է հետևյալ կերպ՝ Aa—Ba, շեռեարար, համաձայնություն պետք է համարել քերականական կապակցության այն ձևը միայն երբ շարահյուսական առա կամ այն միավորը, ազդելով մյուսին կամ փոխազդելով նրանից, քերականական մեկ կամ մի քանի հատկանիշներով⁶ համընկնում է նրան։ Ասածից երևում է, որ համաձայնությունը լեզվական միավորների այնպիսի կապակցություն է, որը ենթադրում է իրարո՞ղ պայմանավորված մեկ կամ մի քանի ընդհանուր քերականական հատկանիշ, ինչպիսի՞ ընդհանուր հատկանիշներ կարող են ունենալ, օրինակ, որոշիչն ու որոշյալը որոշիչը, արտահայտվելով հատկանշային խոսքի մասերով՝ ածականով, թվականով, դերանուններով, դերայիններով և այլն, զոյականական գերադաս անդամին բնորոշ ոչ մի քերականական կարգ չի տարբերակում, որեմն քերականական համաձայնության մասին խոսք լինել չի կարող։ Իսկ երբ որոշիչն արտահայտվում է գոյականով, կարող է ունենալ հոլովի, հազվադեպ նաև թվի (հմտ. շերտերով կտոր, սև աչքերով աղջիկ) քերականական հատկանիշներ, որոնց մեջ հոլովի և թվի հիմնական նշանակությունները զրեթն մթազնել են։ Այդ է վկայում այն երեւոյթը, որ որոշիչ գերով զործածված գոյականների մեծ մասը հնչություն կարող է փոխարինվել նույնահիմք ածականներով (փայտի դուռ>փայտյա դուռ, մետաքսից վզկապ>մետաքսե վզկապ, մորուքով մարդ>մորուքավոր մարդ)։ Ուշագրավ է, որ վերջին դեպքում, երբ որոշիչը, այնուամենայնիվ, գոյականական որոշ քերականական կարգեր է տարբերակում, համաձայնության կամ գոնե փոխադամանավորվածության որևէ երեւոյթ չի նկատվում որոշիչի և որոշյալի միջև։ Համաձայնություն չի կարող լինել նաև հատկացուցչի և հատկացյալի միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ հատկացյալով արտահայտված յուրաքանչյուր առարկայի համապատասխանում է հատկացուցչի դերով կիրառված մեկ առարկա (հմտ. լեռան գագաթը—լեռների գագաթները, աշխատանքի նախաբանը—աշխատանքների նախաբանները, նրա սիրտը—նրանց սրտերը), մի երեւոյթ, որ հայերենում բնորոշ է նաև բայական անդամի և նրա մի շարք լրացումների կապակցությանը։

³ «Русская грамматика», т. 2, М., 1980, с. 13—79.

⁴ Տե՛ս Ռժմանականից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 10։

⁵ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 50։

⁶ Բազմահատկանիշ համընկնման դեպքում վերը նշված բանաձևը կարող է փոփոխվել՝ ստանալով Aa, b—Ba, b, Aa, bc,—Ba, bc և այլ մասնավոր արտահայտություններ։

⁷ Այդ մասին ուշագրավ փոփոխություններ է արել Ն. Պառնասյանը («Ժամանակակից հայոց լեզու», էջ 29)։


Ասածից հետևում է, որ գոյականական անդամի և նրա հիշյալ ստորադաս անդամների միջև եղած իմաստային կախվածությունն ու զուգորդելիության յուրահատկությունը լպետք է ներկայացվի իրեն համաձայնության դրսևորում: Ի դեպ, այդ կապակցություններում ոչ թե գերադաս է ենթարկվում ստորադասի զուգորդելիության հատկանիշին, ինչպես գա սովորաբար ներկայացվում է, այլ տեղի է ունենում բառերի կիրառական շրջանակների խաչաձևում, այսինքն՝ որթան որ ստորադասն է պահանջում եզակի կամ հոգնակի թվով դրվող լրացյալ, նույնքան էլ, գուցե առավել լավով, եզակի կամ հոգնակի թվով դրված գերադաս բառն է թելադրում այս կամ այն իմաստն արտահայտող ստորադաս անդամ (հմմտ. բազմաթիվ գրքեր, կարևոր ու անկարևոր գործեր): Լրացման դերը այդ կապակցությունների մեջ գերազանցատվում է հավանաբար այն պատճառով, որ խոսքի մեջ դրանք նախորդում են գերադաս գոյականական անդամին:

Համառայնության երևույթն ավելի պարզորոշ դարձնելու համար, կարծում ենք, այն անհրաժեշտ է ուսումնասիրել ըստ ընդգրկման ողջ ծավալի՝ համաձայնող բոլոր միավորների ամբողջության մեջ: Սրբեմն համաձայնությունն առկա է լինում սոսկ երկու բաղադրիչների միջև, երբեմն էլ քերականորեն համաձայնող միավորները կազմում են եռանդամ, քառանդամ շարքեր: Ասածը մասնավորելու նպատակով հետևյալ նախադասություններից առաջինում համապատասխանաբար փոխենք քերականական հատկանիշներ տարբերակող առաջին իսկ միավորի թիվը, երկրորդում՝ դեմքը, երրորդում՝ դեմքն ու թիվը և պարզենք, թե դրանցից բացի նախադասության քանի միավոր կհնթարկվի այդ նույն փոփոխությանը: Այսպես, «Ով ուզում է յսխավել իրեն գործում, նա իր ձեռքը պետք է վերցնի ամենալավ գործիքը» > Ովքեր ուզում են շվաղվել իրեն գործում (=գործելում), նրանք իրենց ձեռքը (=ձեռքերը) պետք է վերցնեն ամենալավ գործիքը (=գործիքները), «Նա իրեն հատուկ լրջությամբ դիմեց եղբորը, որը երկար տարիների անշատումից, կարծես, օտարացել էր նրան» (մամուլ) > Դու քեզ հատուկ լրջությամբ դիմեցի եղբորդ, որը երկար տարիների անշատումից, կարծես, օտարացել էր քեզ: «Բայց դու ինչպե՞ս, իմ անուն, Ա՛խ, ինչպե՞ս ես ցամաքել, Դու, որ մայրն ես իմ ոգու, Դու, որ այս ծովն ես ծնել» > Բայց նրանք ինչպե՞ս (իմ անուն), ա՛խ, ինչպե՞ս ես ցամաքել, նրանք, որ մայրն եմ իմ ոգու, նրանք, որ այս ծովն եմ ծնել: Հնդգծված լեզվական միավորները, կատարելով շարահյուսական տարբեր դեր, իրար հետ համաձայնել են մեկ կամ մի քանի հատկանիշներով: Քերականության մեջ, սակայն, համաձայնությունն ուսումնասիրվում է նեղ սահմաններում: Այսպես, սովորաբար նույն նախադասության մեջ առանձին են ուսումնասիրվում բացահայտչի և բացահայտյալի, ենթակայի և ստորոգյալի համաձայնությունները, եթե անգամ բացահայտյալը նախադասության ենթական է: Սակայն համաձայնության ընդհանուր պատկերն ավելի պարզ կլինի, եթե այն ուսումնասիրվի համաձայնող բոլոր միավորների հատկանիշների հաշվառումով: Նե՛ որ նրանք խոսքի մեջ իրարից կտրված լին: Ավելին՝ երբեմն միևնույն միավորի հետ կապվող տարբեր եզրերը իրար հետ ավելի շատ հատկանիշներով են համաձայնում, քան առանցքային, ընդհանուր անդամի հետ: Օրինակ, «Երբեք հոգի՝ Արամը, Աշոտն ու դու եք մասնակցելու կոնֆերանսին» նախադասության մեջ ենթական ու ստորոգյալը քերականական ուղե հատկանիշով չեն համաձայնել, համաձայնությունը կատարվել է ենթականի հետ ուղղակիորեն կապվող միավորների՝ բացահայտչի և ստորոգյալի միջև (բազմակի բացահայտիչների հետ դրվել է հոգնակի ստորոգյալ, 2-րդ դեմքի բացահայտչի պահանջով ստորոգյալը դրվել է 2-րդ դեմքով):

Հասածայնող միավորների բազմանդամ շարք է առաջանում նաև հարաբերական կապակցությամբ բարդ ստորադասական նախադասություններում: Այսպես, երկրադարիչ բարդ ստորադասական նախադասության համար կարելի է կազմել համաձայնող միավորների հետևյալ մասնակաղապարը՝ զլխավոր նախադասության ենթակա (հարաբերյալ) <—> ստորոգյալ <—> երկրորդական նախադասության ենթակա (հարաբերական) <—> ստորոգյալ (հմմտ. «Նա ասաց, ով տեսել էր»): Նշված անդամները կարող են ունենալ իրենց հետ համաձայնող այլ միավորներ, որի հետևանքով կաղապարը կարող է ավելի ընդարձակվել:

Սրբեմն ճիշտ չեն գնահատվում նաև համաձայնության քերականական և իմաստային արժեքները: Սովորաբար դրանք հակադրում են իրար: Այսպես, Մ. Արեղյանը գրում է. «Համաձայնությունը... լինում է բառերի ձևով, այսինքն իրար հետ կապակցվող բառերը, լրացումն ու լրացյալը դրվում են թվով, դեմքով և հոլովով միակերպ... սակայն հաճախ լինում է և բակաուլյամբ»: Այդ հարցի նկատմամբ նույնպիսի մոտեցում է նկատվում նաև այլ լեզվաբանների

մոտ՝, Ելենիով վերահիշյալից՝ կարելի է եզրակացնել, որ քերականական համաձայնության դեպքում չկա իմաստային համաձայնություն և հակառակը: Այսինքն՝ քանի որ «Ես զնում եմ» նախադասության մեջ կա քերականական համաձայնություն (առաջին դեմք և եզակի թիվ ունեցող ենթակայի հետ դրվել է առաջին դեմք և եզակի թիվ ունեցող ստորոգյալ), ուրեմն իմաստային համաձայնություն չկա: Բայց արդյո՞ք իմաստային հիմքից զուրկ է այն, որ եզակի թվով առարկային համապատասխանում է մեկ, հոգնակի առարկաներին միատեսակ շատ հատկանիշներ, դրանով, իհարկե, չի բացառվում նաև եզակի առարկային մի քանի տարբեր հատկանիշներ վերագրելու հնարավորությունը: Ուրեմն կապակցության այդ ձևը մեր լեզվում ունի ոչ թե հետևյալ դրսևորումը՝



Համաձայնությունը նախադասության անդամների միջև կարող է լինել անմիջական և միջնորդավորված: Այսպես, ենթակայի և ստորոգյալի, ենթակայի կամ գոյականական անդամի և նրա լրացումների, ստորոգյալի կամ բայական անդամի և նրա լրացումների միջև եղած համաձայնությունն անմիջական է, իսկ ստորոգյալի և գոյականական անդամի լրացումների, ենթակայի և բայական անդամի լրացումների համաձայնությունը մեծ մասամբ միջնորդավորված: Որոշ անդամների միջև եղած կապն ու համաձայնությունը մի դեպքում կարող է միջնորդավորված լինել, մի այլ դեպքում՝ անմիջական: Օրինակ, «Մենք՝ գյուղական երեխաներս, զուրա թափվեցինք տներից» (ՎԱ, 179) նախադասության մեջ բացահայտյալ (բնակիչներս) և ստորոգյալի (ակնատես եղանք) կապը միջնորդավորված է: Բացահայտյալ նախ համաձայնել է ենթակայի հետ (մենք՝ բնակիչներս), ապա նրա միջոցով՝ ստորոգյալի հետ: Իսկ «Մեացածը՝ հյուսիսարևելյան վեց կամուրջները, մտցվեցին Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության կազմի մեջ» (ՄՀ), «Ամբողջ գյուղը՝ մեծ ու փոքր, հարս ու աղջիկ հավաքվել էին դեպքի վայրում» նախադասություններում ենթակայի և ստորոգյալի միջև, ինչպես նշվեց նաև վերը, քերականական համաձայնություն չկա, այն առկա է միայն բացահայտյալ ու ստորոգյալի միջև: Ուրեմն առաջին նախադասության մեջ ստորոգյալի և բացահայտյալի միջև եղած համաձայնությունը միջնորդավորված է, իսկ վերջին երկու նախադասություններում՝ անմիջական: Իհարկե, զրական հայերենի համար նախընտրելի ձևն առաջինն է:

Համաձայնության պատկերն ամբողջացնելու նպատակով փորձել ենք վեր հանել նաև մեր լեզվում գործող համանման այլ երևույթներ ևս, որոնք երբեմն որակ են կազմում, բարձրանում օրինաչափությունների մակարդակի: Լեզվական այդ երևույթների զնահատության շրջանցումն, անտարակույս, իր հետ բերում է քերականական, իմաստային և ոճական սխալներ ու աղճատումներ: Մյուս կողմից աշխատել ենք ցույց տալ դրանց տեղը համաձայնության ընդհանուր համակարգում: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ համաձայնությունը, իրրե կապակցության առավել ընդհանուր ձև, գործում է համեմատաբար թույլ կապով միացած շարահյուսական կառույցներում¹⁰. այն առկա է թե՛ հավասարական, թե՛ համադասական և թե՛ ստորադասական հարաբերությամբ կապված մի շարք անդամների միջև: Դեռ ավելին, համաձայնություն է նկատվում նաև քերականորեն ուղղակի կապ չունեցող լեզվաբան միա-

9 Տե՛ս նաև «Ժամանակակից հայոց լեզու», էջ 305:

10 Համաձայնությունն իրրե թույլ կապակցության ձև ընդունված է նաև 80-ական թվականների ուսական ակադեմիական քերականության մեջ (այդ մասին տե՛ս «Русская грамматика», с. 20):

վորների միջև, միավորներ, որոնք դրսևորվում են պարզ, բարդ և իրարից քերականորեն անկախ նախադասություններում, Այստեղից հետևում է, որ կապակցության այդ ձևը զնահատելու համար պետք է այնպիսի չափանիշներ ընտրել, որոնք ունակ լինեն իրենց շրջանակներում ամփոփել նրա բոլոր դրսևորումները:

Բացի շատ թեքիչ ուսումնասիրված համաձայնության երևույթներից, մեր լեզվում կան իսկ համաձայնող այլ միավորներ, որոնք քերականորեն չեն արժեքավորվում: Այսպես, երբևէ համաձայնության որոշ դրսևորումներ են նկատվում ստորոգյալի և կրող առարկայի՝ ուղիղ խնդրի միջև: Այդ համաձայնությունը իր ոլորտն է ընդգրկում նաև նախադասության ենթական: Եթե ներգործական սեռի բայն ունի ենթակայի միանգամայն կատարելի գործողության իմաստ և ամեն մի եղակի ենթակայի համապատասխանում է մեկ կրող առարկա, ուրեմն հոգնակի ենթական ենթադրում է հոգնակի ուղիղ խնդիր: Օրինակ, եթե ունենք այն բովանդակությունը, որ, «Ամեն մի երեխա լճակի պարզ ջրի մեջ տեսնում էր իր դեմքը», ուրեմն ճիշտ է «Երեխաները տեսնում էին իրենց դեմքերը» կառուցվածքը, «Ամեն մի աշակերտ ավարտեց իր շարագրությունը», ուրեմն ճիշտ է՝ «Աշակերտներն ավարտեցին շարագրությունները», նույն կերպ՝ «Նրանք ծածկեցին իրենց գլխարկները», հազան վերարկունները: «Երեխաները բացեցին դասագրքերը» և այլն¹¹: Բերած օրինակներում հոգնակի թվով արտահայտված ենթակաների գործողություններին տրամաբանորեն համապատասխանում են հոգնակի թվով կրող առարկաներ: Եթե անգամ ոճական նկատառումներով՝ հոգնակի թվով գրված անդամների կուտակումներից խուսափելու, բառի եղակի թվի ավելի համառոտ ձևի գործածության նպատակահարմարության, գոյականի հոգնակի թվի անսովորության և այլ պատճառներով կրող առարկան եղակի թվով է գործածվում, այնուամենայնիվ իր մեջ պարունակում է հոգնակության իմաստ, և նման դեպքերում գործ ունենք համըմբռնման (սինկդոխա) ոճական միջոցի հետ: Օրինակ, «Տարական պաշտոնյաները շահագործում էին գյուղացուն», «Երեխաները լարել էին իրենց միտքը և ջանում էին հասկանալ երևույթի պատճառը» և այլն: Այս համաձայնությունն իրականացվում է ենթակա—>ստորոգյալ—>ուղիղ խնդիր օղակներով: Գործողության հետ անմիջականորեն կապված առարկաների՝ ենթակայի և ուղիղ խնդրի առկայությունը պարտադրում է համաձայնության առավել կանոնավորություն մասնավորապես ենթակայի և ստորոգյալի ոլորտում, և պատահական չէ, որ դրանց անհամաձայնության դեպքերը հիմնականում կապվում են չեզոք և կրավորակերպ չեզոք բայ-ստորոգյալների հետ:

Թվային համաձայնություն է նկատվում նաև բայական անդամի և նրա միջոցի անուղղակի խնդրի միջև այն դեպքում, երբ ամեն մի առարկա (սովյալ դեպքում ենթական) գործողությունը կատարում է (կարող է կատարել)՝ մեկ առանձին առարկայի միջոցով: Այդ դեպքում հոգնակի ենթակաները ենթադրում են հոգնակի թվով բայ-ստորոգյալ, իսկ վերջինս՝ հոգնակի թվով արտահայտված միջոցի անուղղակի խնդիր: Օրինակ, «Կոլտնտեսականները հողը քանդում են բահերով», «Երեխաները ջուրը բերում են դուլներով», «Տեղահանված բնակիչները իրենց ունեցվածքը տեղափոխում էին սայլերով»: Նման դեպքերում միջոցի խնդրի եղակի կիրառությունն արդյունք է այն բանի, որ այն անվանում է ոչ թե կոնկրետ առարկան, այլ նրա տեսակը: Օրինակ, «Կարտոֆիլի ցանքը աղ շրջանի բնակիչները կատարում են մեքենայով» նախադասության մեջ մեքենայով միջոցի խնդիրը եղակի թվով է գրված ոչ այն պատճառով, որ այդ աշխատանքի համար մեկ մեքենա է պահանջվում, այլ գործողության կատարման միջոցի տեսակը նշելու թելադրանքով: Թվային համաձայնություն կարող է լինել ուղիղ և միջոցի անուղղակի խնդիրների միջև: Օրինակ, «Կոլտնտեսականներին հողը քանդել էին տալիս բահերով»: Այսպիսի կիրառություններում միջոցի անուղղակի խնդիրը ավելի շատ տեսակի նշանակություն է ձեռք բերում և հակվում գրվելու եղակի թվով: Թվային կախվածություն է նկատվում նաև բայական անդամի և նրա ձևի պարագա լրացման միջև, երբ ձևի պարագան ունի համեմատության նշանակություն և մեծ մասամբ պատկերավորման միջոց է: Այս դեպքում ևս համաձայնությունն արդարացվում է իմաստային հիմքով՝ եղակի առարկան (ենթական) ավելի շատ կարող է համեմատվել եղակի առարկայի հետ, հոգնակի առարկան՝ հոգնակի, օրինակ «Կիներ մոտ երեսուն տարեկան, այնքան նիհար էր, որ հասարակ չթի ճաղատել լայն տապալի պես կախ էր ընկած սուր ուսերից» (ՆԴԵ, 193), «Առվակի ափի զմրուխտ հարթության վրա ճերմակ շենքեք են կանգնած պալատների նման

¹¹ Խոսքաշարում համաձայնությունն ու անհամաձայնությունն ավելի ակնառու են երևում, քան խոսքաշարից կտրված նախադասություններում:

(ՎԱ, 5): Այս դեպքում ետ առաջանում է համաձայնության եռանդամ շարք. ենթակա (համեմատող) <—> ստորոգյալ (ընդհանուր հատկանիշ) <—> ձևի պարագա (համեմատելի): Հաճախ թվային համապատասխան քերականական կապ է առաջանում նաև ենթակայի, ստորոգյալի և վիճակի պարագայի միջև: Օրինակ, «Ուղևորները, անցաթղթերը ձեռքներին, մաշեցնում էին հսկիչին», «Երանգ, նեռապիտակներն աչքներին, նայում էին ծովի անհուն տարածությունը», «Մայրերը, երեխաները գրկներին¹², ժամերով սպասում էին փոխադրականի»: Այսպիսի դեպքերում թվային անհամաձայնությունը համըմրոնման հետևանք է, որն առաջանում է տարբեր պատճառներով: Օրինակ, «Իսկ մայրերը, աչքը որդիների ճանապարհին, մինչև այժմ էլ սպասում են»:

Ուշադրով է, որ երբեմն կախվածություն է առաջանում նաև բայ-ստորոգյալի և դրականական անգամի լրացումների ու զոյականական անգամի ու բաական անգամի լրացումների միջև: Վերն արդեն նշվեց, որ քերականական որոշակի կապ է ստեղծվում բացահայտի, ենթակայի և ստորոգյալի, երբեմն էլ՝ միայն բացահայտի և ստորոգյալի միջև: Երբեմն համաձայնություն է նկատվում նաև զոյականական անգամի կամ ենթակայի և բայական անգամի լրացումների միջև: Այսպես, երբ ենթական, իբրև առարկա, նմանեցվում, համապատասխանեցվում է որևէ առարկայի (համապատասխանության անուղղակի խնդրի), մեծ մասամբ թվային համաձայնություն է լինում դրանց միջև: Օրինակ, «Տունը նման էր մի աշտարակի», «Այդ վերաբերմունքը ներդաշնակում էր նրա նկատմամբ ունեցած իմ համակրանքին»: Իսկ «Տունը նմանեցնում էին մի աշտարակի» նախադասության տիպի կառույցներում համապատասխանություն է առաջանում ուղիղ և անուղղակի խնդրների միջև: Երբեմն թվային համաձայնություն է առաջանում ենթակայի (կամ ուղիղ խնդրի) և վերածման անուղղակի խնդրի միջև, երբ վերածումը կամ փոխաբերումը զուտ որակական բնույթ է կրում, առանց քանակականի: Այդ համաձայնությունը կարող է իրացվել նաև առանց ստորոգյալի: Օրինակ, «Հայերեն բնագիրը թարգմանել է (են) ռուսերենի», «Ու դարձ այս մեծ փոխվի (փոխել է (են) երգի» (ԵՁ, 40), «Գաղային նյութը վերածել հեղուկի», «Աշակերտներին բաժանեց խմբերի» և այլն: Բոլոր այն դեպքերում, երբ եզրերից մեկը ենթական է, համաձայնության ծիրի մեջ է մտնում նաև ստորոգյալը («Հայերեն բնագիրը բարգմանվեց անգլերենի»), իսկ երբ ուղիղ խնդրով արտահայտված առարկան է վերածվում մի այլ առարկայի, համաձայնությունը կարող է երկանդամ լինել, և ստորոգյալի ձևով համընկնումը նշված անգամներին օրինաչափ չէ, այլ պատահական: Օրինակ, «Նա (նրանք) հայերեն բնագիրը թարգմանեց (թարգմանեցին) անգլերենի»:

Այժմ ուշադրություն դարձնենք Հովհ. Թումանյանից բերած հետևյալ քառատողի կապակցության որոշ դրսևորումներին. «Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք, Թաքուն մի ցավ ունիք լուռ, Աշիկներդ լիքն է արցունք, Սիրտներդ սև ու տխուր» (ՀԹԲ, 178): Ակնհայտ համաձայնություն կա մի կողմից ենթակայի և կոչականի միջև (չէ՞ որ դրանք նույն առարկան են ակնարկում կամ անվանում), մյուս կողմից՝ կոչականի և ստորոգյալի միջև (ծաղկունք¹³ ցավ ունի): Այս համաձայնությունը կատարվում է բոլոր այն դեպքերում, երբ կոչականը նախադասության տրամաբանական ենթական է¹⁴: Վերը բերված քառատողում կան համաձայնության այլ դրսևորումներ ևս: Իմաստային անժխտելի կապ կա ծաղկունք, աշիկներ, սրտներ¹⁵ անգամների միջև: Դրանց մեջ առկա է պատկանելության հարաբերություն՝ յուրաքանչյուր ծաղիկ ունի իր սիրտը, աչքը (կամ աչքերը), ուրեմն մեկի հոգնակի լինելու դեպքում ենթադրվում է նաև մյուսների հոգնակի թիվը: Իսկ քերականական արժեքով այդ անգամները բաղման ինքն ծաղկունքը կոչական է, աշիկներդ, սիրտներդ՝ ենթականեր: Այստեղից էլ կարելի է եզրակաց-

¹² Քերականորեն դրսևորված համաձայնություն է առաջացել նաև բառակապակցության անցալիքներն ու ձեռքները, նեռապիտակներն ու աչքները, երեխաները և գրկները անգամների միջև:

¹³ Ծաղկունքը բառի մեջ հեղինակը պահպանել է հոգնակի նշանակությունը (հմտ. ծաղիկ-ծաղկունք):

¹⁴ Անհամաձայնությունը դիտվում է շեղում քերականական նորմայից և հարազատ չէ մեր լեզվին: Օրինակ, «Հնկներն, ֆաշիստները ծպտվել են մեր հագուստով, խփի սրկային...» (ՀԹ, 144):

¹⁵ Նշված կիրառության մեջ հոգնակիությունը վերաբերում է և՛ ստացականությանը, և՛ բուն առարկային (հմտ. աշիկները=ձեռք աչքերը, սրտները=ձեռք սրտերը):

նել, որ երբեմն քերականորեն դրսևորված համաձայնություն կարող է առաջանալ շարահյուսության իրար հետ չկապված, բայց միևնույն նախադասության կազմի մեջ մտնող միավորների միջև։ Ուրեմն համաձայնող խոսքային տարրերի հարաբերություններն ավելի բարդ ու բազմակողմանի են, և համաձայնության համար ավանդաբար ստեղծված շրջանակները հաճախ չեն ներառում նրա բազմաձևությունների ողջ կազմապարհները։ Եվ քանի որ դրանք լայն ընդգրկում ունեցող լեզվական երևույթներ են, ուրեմն այդ հարցերի ուսումնասիրությամբ ևս պետք է զբաղվի քերականությունը։

Ուշադրության արժանի են նաև բարդ նախադասության կազմում հանդես եկող որոշ միավորների միջև եղած իմաստային կապերը, որոնք մեծ մասամբ ունենում են համապատասխան քերականական արտահայտություն։ Այսպես, թվային համաձայնություն կա բարդ ստորադասական նախադասության առանձին բաղադրիչներում հանդես եկող և թվի կարգ տարբերակող հարաբերականների և հարաբերյալների ու լրացյալ գոյականական անգամի՝ որոշյալի¹⁶, երբեմն էլ բացահայտյալի ու հատկացյալի միջև¹⁷։ Օրինակ, «Զորավարը հոգու աշրճորով կարգում էր նրանց մտքերը, ովքեր լռելու ծանր իրադրությունից դուրս գալու միակ ելքն էին համարում», «Ով մի աստղիկ մայր է կորցրել՝ Նա կիմանա վերքը սրտիս...» (ՀՇՀՄ, 162), «Վաղվա մասին մտածում են վախկոտները, այսինքն նրանք, որոնք վստահություն չունեն իրենց ուժերի վրա» (ՆԴԾԺ, 189)։

Այդ կապակցությամբ անդրադառնանք նաև Մ. Արեղյանի մի դիտողությանը, որը որոշակիորեն կապված է մեր աշխատանքում առաջ քաշած հարցերին։ Խոսելով որոշիչ երկրորդականները զլխավորին կապակցող եւ հարաբերական դերանվան և որոշյալի համաձայնության մասին՝ Մ. Արեղյանը գրում է. «Դերանվան համաձայնությունն այն անվանը, որի տեղ զբաղեցնում է հիմնվում է ոչ թե լրացումի և լրացյալի ներդասակության հարաբերության վրա (որովհետև դերանվանը լրացում է այն անվանը, որի տեղ զբաղեցնում է), այլ բառերի մի ներքին տրամաբանական հարաբերության վրա, ուստի այս համաձայնությամբ կապակցվում են ոչ թե բառեր իրար հետ, այլ խոսքեր»¹⁸։ Այստեղ ուշադրալից է, որ անվանի լեզվաբանը գտնում է, որ համաձայնությունը կարող է «հիմնվել ոչ միայն լրացումի և լրացյալի հարաբերության վրա, այսինքն՝ համաձայնող միավորները կարող են նաև ստորադասական հարաբերությամբ չկապակցվել միմյանց հետ, մյուս կողմից, համաձայնության ընդգրկման շրջանակները կարող են դուրս գալ պարզ նախադասության սահմաններից։

Քերականական թվի, դեմքի, հաճախ եղանակի և ժամանակի համաձայնություն է դրսևորվում միավորյալ բարդ նախադասությունների մեջ։ Այդ կառուցվածքներում ուշադրալից է, որ եթե ստորոգյալներով միավորված նախադասություններում տարբեր եզրերի բաղադրիչները (ենթակա-ստորոգյալ) կարող են ունենալ տարբեր թիվ (Արամն ու Աշոտը աշխատում են), ապա ստորոգյալների բազմակիության դեպքում թվի, երբեմն էլ դեմքի համաձայնություն է առաջանում բոլոր բաղադրիչներում։ Օրինակ, «Աղեղն է հպում արծաթ լարերին, ճգնում է Միհրանը շարժել լարերը» (ԱԻ, 3, 223)։ Այդ նախադասության մեջ համաձայնող միավորների կազմապարհ հետևյալն է՝ եղակի (կամ հոգնակի) թվով ենթակա—<—>եղակի (կամ հոգնակի) թվով I ստորոգյալ—<—>եղակի (կամ հոգնակի) թվով II ստորոգյալ։

Միավորական բարդ նախադասություններում ստորոգյալը հնարավոր քերականական հատկանիշներով համաձայնում է ենթակային, որը միշտ թերի համաձայնություն է, քանի որ եզրերին իրենց բառային բնույթի պատճառով տարբեր քերականական հատկանիշների են ունակ, և մեկի քերականական հատկանիշները չեն ծածկում մյուսի հատկանիշները։ Այսպես՝

16 Համաձայնության այդ երևույթը նկատելի ու իրրև համաձայնության դրսևորում արժեքավորել են Մ. Արեղյանը, Ն. Պառնասյանը, Վ. Առաքելյանը և ուրիշները։

17 Վերջինները կարող են առավել հանգամանալի ուսումնասիրության։

18 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 529։

գոյական-ենթակա բայ-ստորոգյալ, երբեմն էլ՝		գոյական-ենթակա բայ-ստորոգյալ	
հոլով	հղանակ	հոլով	թիվ
	ժամանակ		հղանակ
	թիվ		ժամանակ
	դեմք		խնդրառություն
	խնդրառություն		սեռ

Անձնական գերանուն ենթակայի և բայ ստորոգյալի քերականական ընդհանրություններն արտահայտվում են հետևյալ կաղապարով՝

անձն. գերանուն-ենթակա		բայ-ստորոգյալ	
հոլով	հղանակ	հոլով	թիվ
	ժամանակ		հղանակ
	թիվ		ժամանակ
	դեմք		խնդրառություն
	խնդրառություն		սեռ

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր մասից դուրս գտնվող քերականական հատկանիշները բավականին թիվ են կազմում: Միավորյալ նախադասությունների այն կաղապարներում, երբ ստորոգյալները բայական են և պարզ, համաձայնությունը կարող է իրացվել ավելի շատ քերականական հատկանիշներով: Այսպես, «Ասավ, կունչեց իր քաշերին, Թուրը կապեց հավուտի, Թռավ, հեծավ նժույգ իր ձին, Դաշտը իջավ արշունի» (ՀԹԻԺ, 186) նախադասության մեջ ասավ, կունչեց, կապեց, թռավ, հեծավ, իջավ բայերը ունեն քերականական դեմքի, թվի, ժամանակի ու հղանակի միասնություն ու այդ հատկանիշներով էլ համաձայնել են: Իհարկե, միավորյալ տարբեր տիպի նախադասություններում համաձայնությունը տարբեր չափերով է դրսևորվում, տարժամանակություն արտահայտող նախադասությունների ստորոգյալները հաճախ ժամանակի, երբեմն էլ հղանակի քերականական կարգերով իրար շեն համաձայնում: Քերականական համաձայնությունը լրիվ կամ մասնակի ձևով դրսևորվում է նաև միավորյալ բարդ ստորադասական նախադասություններում: Օրինակ, «Երբ գրկում էի նրան՝ այն նազելի էակին, և նայում էի լեռնային աղբյուրների նման վճիտ աշուկների մեջ, Թեոֆիլը էի այնտեղ մի թախծալի երազուն կարոտ» (ԱԻ, 2, 28), «Երբ Մային ուշքի եկավ և աչքերը կամաց բաց արեց, կարծես երազի մեջ տեսավ...» (ՆԴԵ, 58):

Դիմաթվային համաձայնություն կարող է լինել նաև բարդ նախադասությունների պարզ ու բաղադրյալ ստորոգյալների միջև: Օրինակ, «Այս եվագ չէր, այլ Ադամի սիրավառ սեռն էր ինքնին, որ շիթ-շիթ ծռում էր հղեղնափողի միջից՝ դարձած արցունք ու տենչանք, տենչանք ու տրտունջ» (ԱԻ, 3, 201): Նման դեպքերում ստորոգյալների համաձայնության վրա մեծ չափով ազդում է ենթակայի դերով հանդես եկող տարբեր նախադասությունների համար ընդհանուր անդամը: Ընդհանուր անդամի դերով կարող են հանդես գալ նաև շարահյուսական այլ միավորներ: Դրանք անվանելով կամ ակնարկելով նույն հասկացությունը՝ երբեմն քերականական տարբեր արտահայտություններ են ունենում: Ընդհանուր անդամը կարող է արտահայտվել շարահյուսական տարբեր միավորների մեջ՝ պարզ, բարդ և անկախ գործածություն ունեցող նախադասություններում՝ կատարելով շարահյուսական նույն կամ տարբեր դերեր: Դրանք կարող են համաձայնել մեկ կամ մի քանի հատկանիշներով: Օրինակ, «Դու խոսում էիր ֆեզնից, քաղցր զործերի մասին քեզ համար սովորական դարձած ձևերով», «Ընկերներից քչերը կարող էին ասել, ավելի շուտ պարծենալ, որ իրենք ըստ ամենայնի արժանացել են նրա վստահությանը», «Բերալը երկու բաժակ դրեց հյուրերի առաջ, իսկ Ինգը վերցրեց փոքրիկ կավե գավաթը» (ՍԽ, 74):


Ի մի ընթերցում համաձայնության բոլոր դրսևորումները՝ դալիս ենք այն եզրակացության, որ կապակցության այդ ձևը հայերենում դուրս է գալիս ստորադասական հարաբերությունների շրջանակներից: Իրար հետ կարող են համաձայնել՝ ա) թերականորեն ուղղակի կապ ունեցող միավորներ՝ հավասարական, ստորադասական և համադասական հարաբերություններով, բ) թերականորեն ուղղակի կապ չունեցող միավորներ:

Տարբեր ուղղությունում դրսևորվող համաձայնության տիպերն իրարից սահմանադատելու համար առաջարկում ենք համաձայնության վերոհիշյալ դրսևորումներն անվանել հետևյալ կերպ: Ստորադասությամբ կապակցված լեզվական միավորների համաձայնությունը կարելի է կոչել ներունակություն (գիտաբար Մ. Արեղյանին է):

Համաձայնության այս տիպը իր մեջ կարող է ընդգրկել բացահայտչի և բացահայտյալի, հատկացուցչի և հատկացյալի, բայական անդամի և նրա լրացումների համաձայնության դրսևորումները:

Հավասարական և համադասական հարաբերությամբ կապված լեզվական միավորների համաձայնությունն առաջարկում ենք կոչել պայմանավորում (координация): Համաձայնության այս տեսակն իր ծիրի մեջ կարող է առնել ենթակայի և ստորոգյալի, ենթակայի և հանգույցի, ենթակայի և ստորոգելիական վերադրի, ստորոգելիական վերադրի և հանգույցի հավասարանի և բաղմակի ստորոգյալների համադասական հարաբերությունները:

Քերականորեն իրար հետ ուղղակի կապ չունեցող միավորների համաձայնությունը կարելի է կոչել ներդաշնակվածություն կամ ավելի համառոտ՝ ներդաշնակություն, որի ոլորտը կարող են մտնել հարաբերյալի և հարաբերականի, լրացյալ գոյականական անդամի և հարաբերականի, ինքնուրույն կամ բաղադրիչ նախադասություններում հանդիպող ընդհանուր անդամների, տրամաբանական ենթակայի արժև ունեցող կոչականի ու ստորոգյալի և միջնորդավորված ստորադասությամբ կապված միավորների՝ բայական անդամի և բացահայտչի, ենթակայի և բայական անդամի լրացումների հարաբերությունները: Համաձայնությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝



Ասածից հետևում է, որ համաձայնության միայն մի տեսակը՝ ներունակությունն է առկա ստորադասական հարաբերությունների մեջ: Ուրեմն ստորադասական կապակցության ձևերը կլինեն խնդրառությունը (կամ կառավարումը), առդրությունը և ներունակությունը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԻ—ԱՎ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 2,3, Երևան, 1974, 1975:
 ԵԶ—Ն. Զ ա ր ե ն ց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968:
 ՀԹԸ—Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Ը ն տ ի ռ երկեր, Երևան, 1978:
 ՀԹՆԺ—Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1969:
 ՀԾ—Հ. Ծ ի ր ա զ, Հուշարձան մայրիկիս, Երևան, 1971:
 ՀՔ—Հ. Ք ո չ ա ռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1966:
 ՆԴՆ—Ն ա ռ-Դ ո ս, Երկեր, Երևան, 1977:
 ՆԴԵԺ—Ն ա ռ-Դ ո ս, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1968:
 ՍԽ—Ս. Խ ա ն զ ա դ յ ա ն, Հողը, Երևան, 1957:
 ՍՀ—«Ողիմոսական Հայաստան» օրաթերթ:
 ՎԱ—Վ. Ա ն ա ն յ ա ն, Ի ն ն եր հայրենի, Երևան, 1963:

О СОГЛАСОВАНИИ И ЗАВИСИМОСТИ
ГРАММАТИЧЕСКИХ ЕДИНИЦ

ЕЛЕНА ВАРДАНЯН

Р е з ю м е

Согласование в армянском языке рассматривается как вид подчинительной связи. Однако существует грамматически выраженное согласование не только единиц, связанных между собой подчинительными отношениями, но и равноправными и сочинительными. Встречается также согласование единиц, не имеющих непосредственной грамматической связи, находящихся в различных синтаксических группах, выполняющих разную грамматическую функцию. Согласование в армянском языке, таким образом, нельзя квалифицировать только как вид подчинительной связи, границы этого понятия шире и вбирают в себя различные виды связи.

Некоторые типы грамматической зависимости, которые имеют имплицитный характер и не получают соответствующего грамматического выражения, должны изучаться не в грамматике, как это принято, а в стилистике как особенности лексической совместимости слов, какими являются, например, отношения «определение—определяемое». С другой стороны, в современном армянском языке есть такие типы согласования слов, остающиеся вне поля зрения лингвистов, которые непременно должны стать объектом изучения грамматики. Согласование всегда имеет смысловую основу, которая может получать или не получать эксплицитное грамматическое выражение. Чтобы правильно очертить природу согласования в речи, необходимо учесть все единицы, грамматически согласующиеся между собой.